ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 183Ա

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի ծրագիրը» հավելվածի 21-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայոց ձորի մարզի համայնքներում շահառուների կողմից կատարված գարնանացան մշակաբույսերի ցանքերի համապատասխանությունը բուսաբուծության աջակցության ծրագրի պահանջներին ստուգելու նպատակով 2026 թվականի հուլիսի 20-ից 31-ը իրականացնել ընտրանքային մոնիթորինգ:

2.Մոնիթորինգ իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով և հաստատել անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Մոնիթորինգի արդյունքներն ամփոփել ծրագրով սահմանված ժամկետում:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվական հուլիսի 17

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026 թվականի հուլիսի 17 -ի
№ [illegible] որոշման

Վայոց ձորի մարզի համայնքներում շահառուների կողմից կատարված գարնանացան մշակաբույսերի ցանքերի համապատասխանությունը ծրագրի պահանջներին ստուգելու, շահառուների թվի առնվազն 20%-ի շրջանում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու համար ստեղծված հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝
Թադևոսյան Հակոբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Հանձնաժողովի անդամներ՝

1. Մարգարյան Գեղամ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ:
2. Սարոյան Նաիրի - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի տեղակալ :
3. Վարդանյան Համիկ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի ավագ մասնագետ :
4. Արամայիս Հակոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույցի մոնիթորինգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար: